

Հիսուսն ուսուցանում էր տաճարում

Երբ Հիսուս Քրիստոսը 12 տարեկան էր, Նա Մարիամի ու Հովսեփի հետ գնաց Երուսաղեմ:

Տան ճանապարհին Մարիամն ու Հովսեփը հասկացան, որ Հիսուսն իրենց հետ չէ: Նրանք շտապ վերադարձան Երուսաղեմ՝ գտնելու Նրան:

Մարիամն ու Հովսեփը երկար ժամանակ փնտրում էին: Ի վերջո, նրանք Հիսուսին գտան տաճարում: Նա ուսուցանում էր մարդկանց և պատասխանում էր նրանց հարցերին: Բոլորը զարմացած էին, թե Նա որքան շատ բան գիտեր ավետարանի մասին: Հիսուսը կատարում էր Երկնային Հոր աշխատանքը, թեև Նա երիտասարդ էր:

Մենք նույնպես կարող ենք օգնել Երկնային Հոր աշխատանքին: Մենք կարող ենք կիսվել ավետարանով: Մենք կարող ենք սովորել տաճարի մասին: Այդ ամենը մեզ կօգնի սովորել և աճել, ինչպես Հիսուսը: ●

Այս պատմությունը կարող եք կարդալ Ղուկաս 2.40-52 հատվածներում:

Հեռացրեք այս էջը և ծալեք այն կիսով չափ: Ապա բարձր պահեք նկարը՝ մինչ կպատմեք պատմությունը: